



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20678



1923

Ծրագիր-Կանոնագիր

ԿՐԹԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ

ՀԱՅ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



2010

1923

ՏՊԱՐԱՆ «Ս. ՍԱՄՈՒԻԼԻ

ՀԱԼԵՊ

2002

373
2-24

գիրքնանութ-գիրքը

գշտաց մասնակի

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՀՀ ՁԱՎ

53389-ահ



Կ0021-67

ՏՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ ԿՐԹԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ
Հայ Ազգ. Առաջնորդարանի

ՊԱՐՏԱԿԱՆ ԴԱՍՏԻՐԱԿԱՆ ԹԻԱՆ ազգի Ֆ
յառաջդիմութեան ու քաղաքակրթութեան խարիսխն է,
հիմնարան է. հետեւարար մեր բոլոր մանուկները պէտք
է կրթուին և անոնց դաստիարակութիւնը պարտաւորիչ
ըլլայ:

Մեր կրթական հասոյթները միշտ անբաւական ե-
զած են եւ են տակաւին ազգին ամբողջ սերունդը՝ հա-
րուսա թէ աղքատ՝ հա ասարապէս դաստիարակիլու հա-
մար եթէ միմիայն թոշակաւոր, հարուստի գաւակնե-
րուն բաց թողունք մեր ազգ. վարժարաններու դռները,
անդին մեր սերունդին մեծագոյն մասը՝ զրկուած տոհ-
միկ դաստիարակութենէն՝ դատապարտուած պիտի բլայ
մնալ անուս, տղէտ եւ կամ օտարին դաստիարակութեան
յանձնուած:

Ազգը միութիւն մ'է, և այդ միութեան բազկացու-
ցիչ ամբողջ տարրերն՝ իրենց կարողութեան չափով՝ պար-
տական են ազգին ճակատագրին վրայ անմիջական եւ
աւագ ազգեցութիւն ունեցող պարտաւորիչ դաստիարա-
կութեան խնդրոյն սատարել, հետեւարար Պարտաւորիչ
կրթական տուրքի գրութիւնը հաստատուած է ամէն հայ
անհատի համար:

| - 3 -


1.— Կրթական Տուրքը պարտաւորիչ է այր մարդոց միայն, տիկիններու և օրիորդներու մասնակցութիւնը սիրով կ'ընդունուի:

2.— Ազգային կրթական պարտաւորիչ տուրք կը պահանջուի անոնցմէ, որոնք առնուազն տարիէ մը ի վեր հաստատուած են Հայէպ, թուականէս սկսեալ:

3.— Ամէն քան տարիքը լրացուցած, աշխատելու եւ շահելու կարող ազգային անհատներ ենթակայ են կրթական տուրք վճարելու:

4.— Այս որ՝ թէւ ներկայիս շահարեր գործով մը չի զբաղիր և կամ ֆիզիքական անկարողութեան մատնուած է և սակայն նիւթապէս ի վիճակի է, պարտաւոր է իր կրթական տուրքը վճարել: Միմիայն անչափահասները, աղքատները, ծերերն ու հաշմանդամները բացառութիւն կը կազմեն:

5.— Քանի որ կրթական տուրքն անհատական է, հետեւարար ընտանիքի մը բոլոր այր անդամները՝ որոնք վճարելու պայմանները կը լրացնեն իրենց վրայ, անհատապէս կը պարտին կրթական տուրք վճարել: Իսկ երբ միենոյն ընտանիքի անդամներէն մէկը կամ ոմանք ստիպողական պատճառներով առժամարար դուրսը գտնուին, տան մացեալ անդամներէն կը պահանջուի իր պարտքը:



— 4 —

ՀՅՈՒՅՆ

1.— Նկատի ունենալով տնտեսական ներկայ տաղանակը՝ կրթական տուրքի նուազագոյն շափ որոշուած է խրաքանչիւր անհասի համար [1] մէկ մէնիւ հնչունդրամ; Իսկ առաւելագոյն չափի սահմանը՝ ձգուած է վճարողի նկաթական կարողութիւն, կրթական պացառմներուն, դպրոցին հանգէց ունեցած յարգանքին ու համականքին եւ իր սիրայօժար առատաձեռնութիւն:

2.— Կրթական տուրքը միանուագ, ամէն տարի Յունվար ամսուան մէջ գանձելի է անպայման:

Իսկ նոյն տարուան վերջաւորութիւնը մինչեւ չվճարողներն պարտական են իրենց պարտքին կէսը աւելի վճարել:



ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԻԶԱՅՆԵՐ

Ազգային իշխանութիւնը սոյն օրինագիծը գործադրելու համար ընականարար բռնի ոյժ չի իրար գործադրել որովհետեւ ոչ կառավարութիւն մ'է եւ ոչ ալ զինուորական իշխանութիւն մը, հետեւարար իր միակ միջոցները պիտի ըլլան անտարեր և պարտազանց աղջոյիններու կրթասիրական և բարեսիրական դդացումներն արթըննել, հակառակ պարտազային պարտազանցներն Ազգային Առաջնորդաբանի եւ եկեղեցական վայելումներէն դրկել:

Ուստի այն՝ որ իր կրթական տուրքի ընկալազիրը
չի կրնար ներկայացնել,

1. Աղջային Առաջնորդարանն անոր ժառանգական,
ճամբորդութեան ևնի ո և է պաշտօնական մէկ գործին
չի նայիր ու կը մերժէ անոր դիմումը՝ անպայման։

2. Զի կրնար թոշակաւոր ու անթշշակ ո եւ է աղ-
դային ժողովի մասնակցիլ և կամ ուսուցչութիւն ընել։

3. Ամուսնական Ս. Պահէ չի կատարուիր։

4. Իր զաւակը դպրոց չընդունուիր։

5. Իս երբ իր յետնեալ տուրքերուն կրկինը վճա-
րելով՝ ընկալազիր կը ներկայացնէ, այն ատեն վերո-
յիշեալ դրկումները կը վերնան։

6. Զը վճարողներու ցանկը Պատկ. Քաղ. Ժողովոյ
վաւերացմամբ, տարուան վերջը, կը հրատարակուի տե-
ղական մամուլի մէջ. պայմանաւ որ մասնախումը նա-
խապէս գոնէ երկու անդամ դրաւոր դիմումը ըրած ըլլայ։

7. Այն աղջայինները՝ որոնք (5) հինգ օսմ. սովի
հայուն դրամ կրթական տուրք կը վճարեն. կը կոչուին
այս տարուան կրթական պատվանդներ, որոնց անուա-
նացանկը կը հրատարակուի տեղական մամուլի մէջ։
թու (10) տասը ոսկի հնչուն դրամ և աւելի վճարողնե-
րունը հրատարակութեան տրուելին զատ, յատուկ տես-
րահներու մէջ կը զետեղուին լուսանկարները։

8. Կրթական Տուրքի Մասնախումը անդամներն ալ
իրաւունք պիտի ունենան հոչուիլ կրթական պատվանդներ
ու պիտի վայելին նոյն յարգանքն ու երախտադիտական
գործումը, մասուլի մէջ անոնց անուններն հրաժարակ-
ուելով և առանձին տետրակներու մէջ իրինց լուսանկար-
ները դետեզիլ տալով։

ԿՐԹԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍՆԱԽՈՒՄԲԸ

Կրթական Տուրքի Մասնախումը կը նորուի Պատ.
Քաղաք. Ժողովոյ կողմանէ, որուն իրաւասութեան տակ
կը մնայ միշտ։

Եիշեալ Մասնախումը կրնան անդամակցիլ միմիայն

1.— Այն աղջայինները, որոնք իրենց քսանըհինգ
տարին լրացուցած են եւ զոնէ նախակրթարանի մը ըն-
թացքը աւարտած։

2.— Այնոնք որ ժողովրդականութիւն կը վայելն,
ծառայելու ոգի և պատրաստակամութիւն ունին։

3.— Աղջային գործերու մէջ իրենց զեղծումը հան-
տառուած և կամ արատաւորուած անհատներ չեն կրնար
ընտրուիլ։

4.— Միմիրին անդամներուն թիւը պէտք է ըլլայ 7։

5.— Պաշտօնավարութեան շրջանն է Յունիար 15ն
սկսեալ, մէկ տարի։ Վերընտրելի են։

6.— Մասնախումը կրնամներէն մին պիտի ըլ-
լայ անպայման Աղջ. Վարժարանի Պատ. Հսդաբարձու-
թեան անդամներէն մէկը, որ միւնոյն ատեն կ'ըլլայ
Մասնախումը ֆանձապետը։

ԿՐԹԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍՆԱԽՈՒՄԲԸ

ԻՐԱՒԹՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

1.— Կրթ. Տուրքի Մասնախումը կը կազմէ իր պի-
ւունը և կը տեղեկացնէ Պատկ. Քաղ. Ժողովոյ առ ի
հաստատութիւն։

2.— Անմիջապէս կը կազմէ Կրթական տուրք վը-
ճառող աղջայիններու անուանացանկը՝ օժանդակութեամբ
աղջ. իշխանութեանց և հայրենակցական միութեանց։

3.— Կը պատրաստէ Կրթական Տուրքի յաւուկ

տպուած ընկալագիրներ, զորս ներկայացնելով պատրաս-
տուած անուանացանկի տէրերուն՝ պիտի աշխատի առա-
ւելադոյն քանակով կրթական տուրք արձանադրել տալ
բուն իսկ վճարողին ձեռագրով:

4.— Մասնախումին իրաւասութեան տակ կ'իյնայ
պարագաներու համեմատ՝ իր յարմար նկատած ձեւով
գործադրութեան գնել տուրքիրու գանձումը, թոշակաւոր
գրագիր և աւագիշուրու գործածութիւնը և ուրիշ վար-
չական կարգադրութիւններ. միայն ի նկատի ունենալու
է, որ ընդհանուր ժամանակը հասոյթին մէկ
տասներորդէն աւելի շը լինի:

5.— Կրթական օւրբեր հասոյթը պիտի յատկացուի
դպրոցը ներկան կառուվարելու և ավագան ապահովելու
համար. հետեաբար ընդհանուր հասոյթին մէկ հինգե-
րորդը պիտի մնայ անձեռնմխելի, որպէս Դպրոցական
ֆօն, որն որ պիտի պահանջ վասահելի աւել մը կամ
դրամատառնը:

6.— Սոյն Ծրագիր-կանոնագիրը վերաքննելի է:
26 Դեկտ. 1922 (Ն.Տ) Հալէպ

Փող: վա իր Խթ. 7 Յունիվար նիստին ոռումամբ,
Վաւեւացնելով զարդ «Կրթ. Տուրքի» Ծրագիր-կանոնագի-
րը, ի պատօնի կր յանձնե նորբնիր «Կրթական Տուրքի
մասնախումբ»ին՝ ի գործադրութիւն. 7 Յունի. 923

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ Հայոց

Բ. Ա. Ա. Յարուխիս Ա. Տեսնապիս

Ա. Դ. Դամիրիան Դ. Մարգեան Յ. Ե. Եսայեան



— 8 —

20678

2013



